

ԵՐԵՎԱՆԻ ՊՐԻՆՏԵՐՆԻ

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелік»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak»,
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է առնա լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաչմանիւ տողատեղին 10 կոպեկ,
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ե Ր Կ Ր Ա Շ Ա Ր Ժ Ը

Նորին Կայսերական Բարձրութիւն Թագաւոր-
անց եւ Մեծ-Իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչ
բարեհաճել է հազար ռուբլի նուիրել յօգուտ
Շամախու երկրաշարժից վնասվածներին:

Երէկ, փետրվարի 7-ին, Շամախուց, մեր սե-
փական թղթակցից, ստացանք հետեւեալ հե-
ռագիրը. «Այսօր առաւօտեան ժամի 6-ին զգա-
ցիկ երկու հարուած, ժողովուրդը սարսափած
շարունակում է փախչել: Պաշտօնական տեղե-
կութիւններին նախելով՝ առ այժմ հանգում են
փրատակների տակից 750 դիակներ, ժողովուրդի
անկող՝ մեռածների թիւը երկու անգամ աւե-
լի է: Միջոցներ են ձեռք առնվում ցրտի եւ
քաղցի դէմ: Բազուկները եռանդով օգնում են
Լեռնային գիւղերի բնակիչներին դուրսից ըն-
դրովին նստն է շամախեցիների գրութեանը:
Այս րօպէին եկան Բագուից կոմիտէի անդամ-
ները: Սարգիսէկեան»:

Կովկասեան կառավարչապետի դիւանատանը
ստացված է հետեւեալ հեռագիրը Բագուի պ.
նահանգապետից. «Երէկ, փետրվարի 4-ին, այս-
տեղ հասաւ սպեւօրների գունդը, որը այսօր,
փետրվարի 5-ին, կը սկսէ փորձաքննել անել
գաւառական գանձարանի քանդված շինութեան
մէջ եւ տեղափոխել արժէքաւոր իրերը մի մաս-
նաւոր տուն, որ համեմատաբար ամենից աւելի
անվտանգ է մնացել եւ որ ընկած է, ի թիւս
այլ տներ, տեխնիկական մասնագործի կող-
մից: Վերջին հեռագիրն ուղարկելուց յետոյ
փրատակների տակից հանված է նորից 40
դիակ: Շամախու գունդը դադարեցրել է փո-
րածքների աշխատանքը, որ այսուհետեւ պէտք
է կատարեն բանուորներ տեղական ազգաբնա-
կութիւնից՝ սպեւօրների ղեկավարութեամբ եւ
բժիշկների հսկողութեամբ: Բժիշկների թիւը
առ այժմ բոլորովին բաւարար է, աշխատում
են հինգ բժիշկներ եւ էլի սպասվում է հնգի
գալտեանը Բագուից, որոնց ուղարկել են մաս-
նաւոր անձինք: Այսօր ստացվեցին վրաններ,
որոնք եւ խիլով են նախօրեք որոշված տեղե-
րում: Ստացվեց նոյնպէս ալիւր: Գաւառական
մասնագործը արդէն կազմակերպված է եւ
սկսել է իր գործունէութիւնը»:

«Ноб. 0603.» լրագրող ստացել է հետեւեալ
կեան. Բագուի ենք մի քանի տեղեկութիւններ
այդ աղէտի մասին «Մշակի» 1872 թ. համար-
ներէն:

Երկրաշարժից այս անգամ վնասվեց Շամա-
խու բարձրագիւր մասը, ուր հայոց թաղն է:
Հայ-բողոքականների ժողովարանը քանդվեց,
թոքնելով իր տակ 22 հոգի, մեծ մասամբ ե-
րեխաներ: Ընդհանուր կորուստը համեմատա-
բար շատ մեծ էր—118 հոգի մեռածներ: Բայց
քաղաքին հասած վնասը հասնում էր 1,137,000
ռուբլի գումարին: Հիմնադրական քանդվեց հայոց
Նորայի եկեղեցին: Կովկասեան փոխարքայ
Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայովիչը 2000
ռուբլի նուիրեց վնասվածներին, իսկ Ալեքսան-
դրը II Կայսրը—20,000 ռուբլի: Շամախում
հայերից կազմվեց մի մասնագործի, վնասված-
ների օգտին նուէրներ հաւաքելու համար:

Շամախին նորից սկսեց դատարկվել: Այդ
ժամանակ Բագուն արդէն շատ առաջ էր գնա-
ցել իրեն նահանգական—ծովայինայ քաղաք
եւ շամախեցիները, մեծ մասամբ հայեր, այն-
տեղ գաղթեցին:

Այդքան ահագին վնասներ կրելուց յետոյ
Շամախին, ի հարկէ, աղքատացաւ, դարձաւ
մէկը մեր գաւառական աննշան քաղաքներից:
Այդ վիճակով էլ նա գտն էր լինել, եթէ բնու-
թիւնը հաշտ լինէր նրա հետ: 1872-ից յետոյ
մի քանի անգամ եղան աննշան երկրաշարժներ,
բայց ոչինչ վնաս չը տուին եւ ազգաբնակու-
թիւնը համարեա համոզված էր, որ այլ եւս
չի տեսնի այնքան մեծ աղէտներ: Այդ համոզ-
մունքին ոյժ էր տալիս այն ենթագործիւնը,
որ Բագուի նաւթային հորերը, փանտանները,

հեռագիրները. «Փետրվարի 4-ին, երկրի տա-
տանումը յունվարի 31-ին տեղի ունեցաւ ժամի
1-ին եւ տեւեց երեք րօպէ: Բագուը քանդվեց
միանգամից: Սատակ տատանումը կրկնվեց ե-
րեկոյեան ժամի 8-ին: Ապա գիշերով տատա-
նումներ կրկնվում էին ամէն մի 5—10 րո-
պէում: Փետրվարի 2-ի գիշերը, ժամի 12-ին,
նորից զգացվեց սատակ տատանում: Փետր-
վարի 3-ի գիշերը եւ այդ օրվայ ընթացքում
քանդվեցին մի քանի տներ, որոնք անվտանգ
էին մնացել: Մայր եկեղեցին քանդված է, Բագուի
թուրքական մասը քանդվել է ամբողջովին:
Փրատակների տակ մնացածների եւ մեռածների
թիւը հասնում է հինգ հազարի: Մանդայից ա-
ռաջացաւ հրդեհ եւ ոչնչացրեց շատ ապրանք:
Բոլոր բնակիչները մնացին առանց պատսպա-
րանի: Յուրտ գիշերներ է անում. անձրեւ է
գալիս: Երկրաշարժը շարունակվում է»:

Փետրվարի 8-ին, «Սպեւօրների գալուց եւ
փորձաքննելու աւելի եռանդով առաջ տանե-
լուց յետոյ» արտամիջիկ տեսարաններն աւելա-
ցան: Ամէն կողմից շարունակ, իրար ետեւից,
ձգվում են դադարների շարքեր դէպի թշուառ-
ների վերջին հանգստութեան տեղը: Մեռած-
ների թիւը, ընդհանուր առմամբ, հասնում է
զարհուրելի թիւի: Հաց, վրաններ եւ օգնու-
թեան համար այլ կարեւոր առարկաներ ստաց-
վում են ամէն օր: Իսկ մինչեւ այդ՝ չնորհիւ
Շամախու գնդի գնդապետի նախաձեռնու-
թեան, բնակիչները թիւած հաց ստանում էին
զօրքից: Եղանակը անտանելի է»:

«Вестик» լրագրում կարգում ենք հետեւեալ
մանրամասնութիւններ Շամախու երկրաշարժի
մասին. «Ով գտնէ մի անգամ տեսել է Շամա-
խին, նա այժմ կարող է զարհուրել այն աւեր-
մունքից, որ գործել է այս թշուառ քաղաքում
յունվարի 31-ի երկրաշարժը: Բագուի թուր-
քական ընդարձակ մասը, իր երկար չուկայով,
այժմ այլ եւս չը կայ: Մի քանի հազար տներ,
այգիների, շարքերի, մզկիթների, մահմեդա-
կանների ուսումնարանների եւ բազմաթիւների
հետ միասին, փոխարինվել են քարակոյտերի
մի ահագին բլրով, որի միջից տեղ-տեղ
ցցված երեւում են գերեզմաններ եւ տախտակ-
ների կտորներ կամ տեսնվում են ծառերի փո-
շոտած կատարներ: Փողոցներում—եթէ միայն
այդ անունը կարելի է տալ քարերով եւ գանա-

հողի երեսն են հանում այն ստորերկրեայ ոյ-
ժերը, որոնք մինչեւ այդ դուրս գալու տեղ
չուէին եւ երկրաշարժ էին պատճառում:
Մոռացված էր անցեալը: Խեղճ Շամախին
մինչեւ իսկ լաւ օրերի երազներ էր տեսնում:
Նա մտածում էր երկաթուղի ունենալ, սպա-
սում էր թէ մօտիկ ապագայում կունենայ
նաւթային արգիւնաբերութիւն, որ կը բերէ
հարստութիւն, անտեսական բարեկեցութիւն:
Եւ յանկարծ, յունվարի 31-ին, մի անգը հա-
րուած վերջ է դնում այդ բոլոր յոյսերին ու
երազներին: Այսօր Շամախին մոխիրների վրա
նստած մի գծաբախ է, զուրկ օրական հացից
անգամ:

Վերջին տեղեկութիւններին նախելով, Շամա-
խու ազգաբնակչութիւնը 20,000 հոգուց է բաղ-
կացած: Ահագին մեծամասնութիւնը թուրքերն
են կազմում: Հայերի ճիշտ թիւը չը կարողա-
ցանք իմանալ: Շամախու նախկին առաջնորդ
Մեքոպոլ արքեպիսկոպոսը մի քանի տարի ա-
ռաջ հրատարակած իր մի գրքում ասում է, թէ
Շամախում ապրում են 500 տուն հայեր:

Այդ տները այժմ չը կան, խորտակված են:
Պիտի իմանալը, որ գլխաւորապէս աղքատ ար-
հեստուր դասակարգն է մնացել Շամախում:
Բայց ով էլ լինի, ինչ էլ լինի—հայ թէ
թուրք—այսօր օգնութեան կարօտութիւն կայ:
Մարդկային ստակալի դժբախտութիւն... Իր-
նութեան աղէտների դէմ մենք անգոր ենք մի
քան անելու: Բայց այդ աղէտների զոհերի ար-
տասունքը սրբելը—դա մեր ամենքին սրբազան
պարտականութիւնն է:
Մի մոռանալը... Լ.

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԲԵՐԻՆԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ ամսին 24-ին, երկարատեւ եւ ծանր հիւանդութիւնից յետոյ՝
ինչպէս որ անգղանիստներն եւ ծանօթներն հնոր բերել յուղարկաւորութեանը, կիրա-
րելով 10-ին, առաւօտեան 10 ժամին, իր սեփական տնից, որ գտնվում է
Շեղծօնիկովսկայա (նախկին Բոլշայա-Կիրիլայա) փողոցի վրա, № 12, դէպի Նորայի
եկեղեցին, իսկ այնտեղից Ուշիվանի գերեզմանատունը: Ամբիճը — չարախ, երեկոյեան
6 ժամին:

ԲՈՎԱՆԻԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Հաւաքական ոյժով. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Երկրաշարժը, երկրաշարժից վնասվածների օգ-
տին. Նամակ Երեւանից. Նամակ Նորադարեւ-
թեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Մարգարիտական մի նոր դաշնակցու-
թիւն. Արտաքին լուրեր. ՀՅՈՒՍԳԻՐՆԵՐ. —
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ.
Շամախի:

ՀԱՒԱՔԱԿԱՆ ՈՅԺՈՎ

Այն անձինք, որոնք ականատես են ե-
ղել Շամախու աղէտին, ինչ կարողանում
առանց խորապէս յուզվելու պատմել այն
սարսափելի տեսարաններն մասին, որ բաց-
վում են ամէն օր, ամէն մի քայլում, հիւս-
նայտաւ եղած շարքաւոր քաղաքում:
Բագուի մէջ. գիւնդներն եւ կողմնակի բան-
ուորներ ամբողջ օրեր պեղում են փա-
տակները դուրս հանելու այնտեղ թաղ-
ված դիակները: Երկրաշարժը տեղի ու-
նեցաւ այն միջոցին, երբ մարդիկ հան-
գիստ ու հանգարտ, առանց որ եւ է կա-
նածի ու երկիւղի, անց էին կացնում ի-
րանց օրը: Տղամարդկանց մեծ մասը զբո-
սում էր, իսկ կանանց եւ երեխաներն մեծ
մասը իրանց աներում: Այդ է պատճառը,
որ գահերի թիւում ամենից շատ մենք
տեսնում ենք կանանց եւ երեխաների:
Շամախեցիների այն մասը, որ կարող է
փախչել քաղաքից դէպի Բագու, Թիֆլիս,
Նուշի եւ ուրիշ քաղաքներ, որտեղ ունեն

ազգականներ եւ ծանօթներ, շտապում է
դուրս փախչել գերեզմանների քաղաքից եւ
պատսպարան գտնել նրանց մօտ: Բայց
ազգաբնակչութեան մեծագոյն մասը ան-
կարող է այդ անել եւ նա մնում է հայ-
րենի օջախի մօտ, որտեղ նա թողել է իր
կալուածները եւ իր հողերը, որտեղ փա-
տակների տակ գտնվում են նրա գոյքը,
գրամը, թղթերը եւ բնութանկան սրբու-
թիւնները: Տեղափոխվելու համար վեր-
ջապէս փող է հարկաւոր, որից դուրս է
ազգաբնակչութեան մեծամասնութիւնը,
մանաւանդ երկրաշարժից յետոյ, որ խից
նրանից նրա ամբողջ հարստութիւնը:

Վնասված ազգաբնակչութեանը անհրա-
ժեշտ կերպով հարկաւոր են փող, հաց,
անկողին եւ շորեր: Օգնութիւն տուողները
թող շտապեն, որքան կարելի է շուտով
հասցնել իրանց նպատակները, որպէս զի
այժմ, երբ դեռ ցուրտ է, երբ կարիքը
շատ մեծ է, երբ մարդիկ հնար չեն գտել
որ եւ է կերպով կառավարվելու, կարող
լինեն հոգալ իրանց անհրաժեշտ կարիք-
ները եւ դրանով մասամբ թուլացնեն ի-
րանց վշտը եւ կորուստներն մեծութիւնը:

Հասարակութիւնը ուժեղ է իր փոխա-
դարձ օգնութեան ոյժով, իր հաւաքական
համախմբութեամբ եւ գործակցութեամբ:
Թող ներկայ դէպքը դարձնայ միայն
մարդկանց օգնելու թշուառութեան եւ
թարկված իրանց մեռածներին:

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ՇԱՄԱԽԻ

XIX դարի ընթացքում Շամախին ութ մեծ
երկրաշարժ է տեսել: Մանր, աննշան երկրա-
շարժներ աւելի շատ են եղել, որովհետեւ Շա-
մախում համարեա սովորական, առօրեայ երե-
ւոյթներ են գտնի տատանումները:

1806 թ.ին երկրաշարժը քանդեց Շամախու
բերդը: 1828-ի յուլիսի 9-ին եւ 28-ին Շամա-
խում քանդվեցին 247 տներ եւ 30 խանութ-
ներ, իսկ շրջակայ գիւղերում մօտ 300 տուն:

Այսուհետեւ մինչեւ 1847 թ.ականը հան-
գիստ է մնում Շամախու հողը: 1847-ին թե-
թեւ երկրաշարժ է լինում յունվարի 28-ին եւ
29-ին եւ փետրվարի 2-ին: 1848-ին, սկսած
յուլիսի 10-ից մինչեւ համարեա տարվայ վերջը,
մի շարք ցնցումներ են տեղի ունենում:
Երկրաշարժը աղէտի կերպարանք ընդունեց
1859-ին: Այդ թ.ին, մայիսի 30-ին, կէսօրից
յետոյ ժամի 4-ին, ստորերկրեայ ուժեղ հա-
րուածը քանդեց եւ վնասեց 3250 գանաղան
շինութիւններ:

Այդ ժամանակ Շամախին մի հարուստ նա-
հանգական քաղաք էր: Հարուստը տեւեց 1 1/2
րօպէ, ահագին փրատակների տակ 400 հոգի
մնացին: Սարափը պատեց բնակիչներին եւ
իսկոյն հարց ծագեց, որ պէտք է փոխել բա-
ղաբը, մի ուրիշ տեղ տանել: Այն ժամանակ

վայ կովկասեան փոխարքայ Իշխան Բարեա-
տիակի կարգադրեց, որ նահանգական վար-
չութիւնը տեղափոխվի Բագու: Մի յանձնաժո-
ղով կազմվեց վնասները որոշելու համար եւ
յանձնաժողովը վնասները հաշուեց 1,344,000
ռուբլի: Շամախեցիները ինքրեցին կառավա-
րութիւնից, որ իրանց 30 տարվայ ժամանակով
փոխ արվի մի միլիօն ռուբլի, առանց տուկո-
սների եւ բացի դրանից ազատել իրանց հարկե-
րից 40 տարի ժամանակով: Իշխան Բարեա-
տիակի չափազանց համարելով այդ պահանջ-
ները, հետեւեալ կերպով օգնեց վնասվածնե-
րին. 15 հազար ռուբլի բաժանվեց չուսեւորնե-
րին իրեն նպաստ. քաղաքացիները 10 տարով
ազատվեցին հարկերից, պետական գանձարանը
100 հազար ռուբլի փոխ տուեց 20 տարվայ
ժամանակով:

Քաղաքը տեղափոխելու հարցը մոռացվեց,
Հեշտ չէ թողնել հայրենի գեղեցիկ երկիրը,
ստացուածքը եւ գնալ ուրիշ տեղերում, կլի-
մայական այլ պայմանների մէջ օթեւան որոնել:
Ծիշը է, շատերը հեռացան քանդված քաղաքից,
բայց համեմատած մնացողների հետ՝ այդ հե-
ռացողները մի աննշան փոքրամասնութիւն էին
կազմում:

Եւ ամա 1869 թ. օգոստոսին դարձեալ երկ-
րաշարժը ցնցում է Շամախին, դարձեալ աւե-
րուսներ է գործում:

Երեք տարի անցած այդ օրից, 1872-ի յուն-
վարի 16-ին երկրաշարժը նորից աղէտ է բե-
րում: Գծադր քաղաքի գլխին Օրը կիրակի էր:
Առաւօտեան 9 ժամ 55 րօպէին սկսվեց սաս-
տիկ երկրաշարժ, որ շարունակվեց 43 վայր-

զան կտորտանքներով ծածկված նեղ տարածու-
թիւններն, — տեղաւորված մարդիկ գործում
են ոչ Անդրկովկասեան ամենաին քաղաքնե-
րից մէկի բնակիչների թուղթուրովին, այլ
օտար տեղերից եկած պանդուխտների, որոնք
չար բաղդից հայածված դէպի աւերակների այս
աշխարհ, չը գիտեն, թէ ինչ անեն լուռ եւ
անհիւրընկալ նոր հայրենիքումս Վայրենու նը-
ման նայելով իրանց չորս կողմը, այս թշուառ-
ները դեռ եւս չեն կարողանում ուշքի գալ, եւ
եթէ երբեմնայեւ վայրկենաբար ուշքի էլ են
գալիս ու աշխատում յիշել որ եւ է բան իս-
րանց գլխով անցածից, այդ գիտակցութիւնը
աւելի եւս ծանր կերպով է ներգործում նրանց
առանց այն էլ զգողված հոգեկան դրութեան
վրա՝ Հըռ խոնարհութեամբ նայելով հայրենի
քաղաքի աւերակների վրա, որ այնքան բազմա-
թիւ զոհեր է կրակել իր հարազատ որդիներից,
տանջանքների եւ սարսափի անջնջելի դաշոց-
մունքներով լցված այդ արարածները անկարող
են գնահատել ոչ միայն այն, որ իրանք կեն-
դանի են մնացել, այլ եւ չեն գիտակցում, որ
այժմ կան եւ ապրում են նրանք այժմ չեն
ապրում եւ նրանց ճակատագրական անարտունյ
հայեացքները եւ բթացած զգացմունքները բո-
րորովէն համապատասխանում են նրանց սնների
աւերակների վրա թաղաւորող գերեզմանական
խորհրդաւորութեանը:

Ի հարկէ, հարց ու փորձ անել մարդկանց,
որոնք այսպիսի զարհուրելի դրութեան մէջ են
գտնվում, որ եւ է բանի մասին անհնար է, ո-
րովհետեւ տանջանքների միւրը քամած այս
թշուառականները պէտքովն են, այն էլ ոչ բո-
լորով, բռնկութեան համար միայն, որպէս ծանր
հիւանդներ: Անա թէ ինչու անհրաժեշտ է շու-
տափողթ անմիջական բռնկական օգնութիւն
հասցնել, առանց որի կենդանի մնացածները կա-
րող են զոհ գնալ նրանց տիրած սարսափին եւ
ընդհանրապէս հոգեկան զօրեղ յուզմունքներին:

Ականաչանների աստիճան, քաղաքի թուրքա-
կան մասում, բառի բուն նշանակութեամբ,
գետնի հետ են հաւասարվել մօտ 4000 տուն:
Ուրեմն արքան բնակիչներ զրկել են իրանց
վերջին գոյքից եւ զարծել են յետին աղքատ-
ներու եւ արքան հոգի գտել են իրանց գերեզ-
մանք աւերակների տակ: Առ այժմ ճիշտ թւեր
չը կան, վերադարձողներից մէկը հաղորդեց
մեզ, որ մինչեւ փետրվարի 8-ը, թուրքական
գերեզմանատան պահապանի հաշուով, թաղված
են 486 դիակներ: Ինչպէս եւ առաջ ասում էին,
առանձնապէս շատ են կոտորվել կանայք եւ
երեխաներ: Ինչպէս ենթադրում են, բազմա-
թիւ թշուառներ մնացել են 11 քաղանքների
աւերակների տակ, որոնցից մէկը, ամենամեծը,
որ գտնվում է իր մէջ 300 մարդուց աւելի,
ինչպէս ասում են, լինէր էր այդ օրը Բա-
զանքներում փորձաւորներ անել պէտք է
սկսեն սպառնալիքի դալուց յետոյ: Առ այժմ
աշխատում են Շամախու գնդի զինուորները:
Բացի քաղանքներից, այդ դժբաղդ օրը քա-
ղաքի երկու նշանաւոր մասնաշրջանների տնե-
րում կոտորվում էին քիչ առած մեռած նմուշ-
ներների սպանմանը, ուր սովորաբար լի-
նում են բազմաթիւ կանայք: Հէնց այդ տնե-
րում, ինչպէս ենթադրում են, մնացել են ա-
ւերակների տակ մօտ 100 եւ գուցէ աւելի կա-
նայք եւ երեխաներ: Եթէ աւերված մզկիթներն
եւս դեռ չեն սկսել փորել, չը նայելով որ նը-
րանց աւերակների տակ էլ քիչ մարդիկ չեն
մնացել, որովհետեւ երկրաշարժը պատահեց
կէսօրեան նամաղի ժամին, որ մասնաշրջան-
ները, մանաւանդ իրանց տներից հեռու ապրող
մասնաշրջանները, գերադասում են կատարել
մզկիթներում:

Մի ուրիշ թղթակից գրում է.
«Յունվարի 31-ին, ցերեկվայ 1 ժամին, սկըս-
վեց մի սարսափելի, չը տեսնված երկրաշարժ,
որ չարունակվում էր ամբողջ կէս ժամ Բաց-
վեց մի սարսափելի տեսարան: Այնպիսի փոշի
բարձրացաւ, որը օդը միջնեց եւ գէս ու գէն
ընկնող մարդիկ, շփոթված, գլուխը կորցրած,
չէին կարողանում ճանաչել միմեանց: Ընդհա-
նուր խառնաշփոթութեան մէջ ամեն մէկը աշ-
խատում էր ազատել իրան եւ իրեններին, բայց
երկրաշարժը եւ յուսահատութիւնից խելակորոյս
եղած, հաշիւ չէին տալիս իրանց, թէ ինչ են
անում: Դա մի սարսափելի, տարերական թըշ-
ւառութիւն էր: Մարդիկ փախչում էին ամեն
ուղղութեամբ, աղաղակում էին եւ օգնութեան
չէին կանչում, կենդանիները ոռնում էին, թըռ-
չունքները զիպչում էին ցանկերին եւ պարիսպ-
ներին, իսկ այդ ժամանակ տները, խանութ-
ները եւ մզկիթները խորտակվում էին, քանդ-
վում էին թշուառներով, հարկւրաւոր մարդիկ
կենդանի թաղելով իրանց տակը: Երեկոյան

մօտ, երբ խառնաշփոթութիւնը մի փոքր դա-
դարեց, իւրաքանչիւրը սկսեց որոնել իր մե-
ծաւորներին, մանուկներին, կանանց, եղբայր-
ներին, քոյրերին: Բազմաթիւ փրկարձան նրանք,
որոնք ազատվել էին փախչելով շրջակայքը:
Ճանաչանքների պատկերը անհրաժեշտ է. ամ-
բողջ քաղաքում բարձրացան հեծեմանքի, օդ-
հոտութեան կանչող ձայնի: Ազգականների, բա-
րեկանների բազմականգնութիւնների մի ընդհա-
նուր վայնասուն, փլված տների տակից հրաշ-
քով ազատված մանուկները, հեծկալալով եւ
լայլով, անդիտակցաբար հարցնում էին անցորդ-
ներին իրանց ծնողների մասին:

Մի խօսքով, մարդ խօսք չէ գտնում նկարա-
գրելու տանջանքների այն պատկերները, որոն-
ցից մարդու սիրտը կտոր-կտոր է լինում...

Յունվարի 31-ին, ցերեկվայ 1 ժամին, մինչեւ
փետրվարի 1-ի առաւօտը, գետնի 40 զօրեղ
ցնցումներ են եղան, որոնք ամեն անգամ ուղեկց-
վում էին ստորերկրեայ հարուածներով: Իւրա-
քանչիւր նոր ցնցումի ժամանակ փուլ էին գա-
լիս տները, քանդվում էին պատերը կամ կը-
տուրները:

Բազանքների փառապանքի տակ ապանված
մանուկների եւ կանանց թիւը դեռ եւս յայտ-
նի չէ, բայց մարդկային զոհեր խիստ շատ են:
Կան տներ, որոնց աւերակներից հանված են
մինչեւ վեց դիակներ: Ընդհանրապէս, կարծում
են, որ քաղաքի մասնաշրջան մասում տուն չը
կայ, ուր ապանված չը լինէին երկու-երեք
մարդ: Բոլոր հին յիշատակարանները եւ ամբա-
շէն տները, չը խօսելով արդէն մանրների մա-
սին, խորտակվում են: Հոգաւոր գլխաւոր
մզկիթը, որ ութ հարկան տարուց աւելի դո-
յութիւն ունէր եւ հին արաբական ճարտարա-
պետութեան հազուադէպ յիշատակարաններից
մէկն էր, հիմնադրատակ է եղած. քանդվեցին
նոյնպէս ուրիշ մզկիթներ եւ եկեղեցիներ եւս:
Դիանգված է ամբողջ քաղաքը, նրա մի մասը
խորտակման ժամանակ սկսված հրդեհի բաժին
է դարձել:

Բնակիչները սարսափելի թշուառ դրութեան
մէջ են: Ոչ ոք ոչ հաց ունի, ոչ շուր, ոչ
փայտ, ոչ էլ լուսաւորութիւն. գիշերները քա-
ղաքը ընկղմվում է մի անթափանցելի խաւարի
մէջ, որը հառաչանքների եւ հեծկալանքների
հետ սարսափելի տպաւորութիւն է գործում:
Յուրաքանչիւս, իր կողմից, սաստկացնում է ընդ-
հանուր թշուառութիւնը: Առանց չափազանց-
նելու կարելի է ասել, որ ոչ մի չամախեցի
այժմ ապաստան չունի եւ բոլոր բնակիչները
անց են կացնում ցերեկները եւ գիշերները
բաց երկնքի տակ, մեծ մասամբ, համարեա,
մերկ: Եթէ դրոյց շուտով օգնութիւն չը հասնի,
բոլոր բնակիչները կը հորչեն: Յերկները քաղա-
քում չըջում են երեխաների եւ կանանց ամբողջ
խմբի, ցնցոտիներով եւ վշտահար, հաց մու-
րալով, հարուստները եւ աղքատները մի եւ
նոյն դրութեան մէջ են գտնվում եւ ոչ մէկի
մօտ չը մնացին միջոցներ ոչ միայն ուրիշներին
օգնելու, այլ եւ իրանց կերակրելու համար:

Երկրաշարժի ակնատեսն պ. Պօպով հետե-
ւեալն է գրում:
Մինչեւ ամենասարսափելի հարուածը, որ
քաղաքանոց արեց ամբողջ քաղաքը, նկատելի
եղան երկու թոյլ հարուածներ, — մէկը առաւօ-
տեան ժամի 8-ին մօտ, միւս — 11-ին: Երեւի,
զրանք այն փոթորիկի համաւաւերներն էին,
որ դալիս էր չարաբախտ քաղաքի վրա այդ օրը:
Ժամի 12-ին եւ քնացի իմ ընկեր ժամագործի
մօտ, որի խանութը գտնվում է ներքին բազա-
րում: Յանկարծ 12 ժ. 50 րոպէին (հեռագիր-
ներում ասված է 12 ժ. 40 րոպէ, բայց իմ ըն-
կերի արհեստանոցում ժամացույցները կանգ են
առել 12 ժ. 50 րոպէի վրա), լուրջ ստորերկ-
րեայ թնդիւն եւ մեծ, հասկանալի թէ բանը
ինչու է, հազիւ գուրս վազեցինք փողոց, երբ
մեր ետեւում փուլ եկաւ խանութի պատը:
Գետնի երեքուստները այն աստիճան սաստիկ
էին, որ անկարելի էր ոտքի վրա կանգնած
մնալ. եւ մի քանի անգամ վայր ընկալ եւ միայն
իմ ընկերի ջնորհիւ էր, որ ինձ կիս չը տուեց
մեր ետեւից եկող ամբողջ, Լազը, մարդկանց
աղաղակները, քանդվող տներից բարձրացած
աղբուկը, որոնցից բարձրացել էր այնպիսի սար-
սափելի փոշի, որ անկարելի էր աչք բաց անել —
այս բոլորը խանգով էր մի անհրաժեշտակցի
քաօսի մէջ: Կանայք եւ երեխաները, որ կարո-
ղացել էին ժամանակին գուրս փախչել տներից,
չնորհալուց թիւն էին յայտնում Աստուծոյն
իրանց փրկութեան համար, մոռանալով իրանց
ազգականներին, որոնց վիճակը նրանց դեռ
յայտնի չէր: Մենք չարունակում էինք վազել
քաղաքի լայն փողոցով եւ մեր աչքերին ներ-
կայանում էին մէկը միւսից սոսկալի տեսա-

րանքներ: Մի քանի տկուր կանայք գուրս վազե-
ցին բաղնիքից, որի փլատակների տակ նրանք
թողել էին մօտ 150 հոգի իրանց ընկերուհիներ-
ից: հոգեց եկեղեցուց, ուր այդ ժամին պա-
տարադ կար, գուրս վազեց զգեստաւորված
քանաններ, իսկ նրա ետեւից ամբողջ ժողո-
վորը, մէկը միւսի գլխով թռչելով, թողնելով
նմուշեղանակ եկեղեցում: Եւ մի շարք ուրիշ տե-
սարաններ, որոնց յիշուց անգամ ընդ-ընդ են
կանգնում գլխի մազերը: Մի րօպէից աւել
չարունակվեց առաջին աւերից հարուածը, նրան
անդադար հետեւում էին աւերի թեթեւ հա-
րուածներ եւ շտապում էի քաղաքի վերին
մասը, ուր ապրում էի իմ մօր հետ, եւ կարող
էր երեւակացել, որքան եւս ուրախացայ, տես-
նելով նրան ողջ եւ առողջ: Մայրս պատմեց, որ
ցնցումի ժամանակ ինքը սենեակումն էր, եւ
ուզեց գուրս վազել, բայց գուրս բաց անել
անհաւան էր եւ եթէ չը լինէր այնտեղ մեր մի
ազգականը, մօրս գրութիւնը փառ կը լինէր:
Պէտք է ասել, որ բնակիչների մեծ մասը այս
իսկ պատճառով չը կարողացաւ տներից գուրս
փախչել:

Գետնի երեքուստները չարունակվում էին
ամբողջ գիշերը եւ միւս օրը, մինչեւ իմ
հետնալը: Երկու գիշեր եւս ստիպված էի
մնալ բակում, բաց երկրի տակ, եւ խոս-
տովանում եմ, ամենափոքր ցուրտ ան-
գամ չէի գտնում, մի բան, որ զարմանալի չէ,
եթէ նկատի առնենք այն յուզմունքները, որ
պատում էր ինձ եւ ամենքին գետնի ամեն մի
երեքման ժամին: Երկու օրից յետոյ եւս հեռա-
ցայ Շամախուց, թողնելով աւերակների տակ
իմ ամբողջ ունեցած-չունեցածը:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎԵՍՏՎԱՇՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Մենք ստացանք հետեւեալ նուիրատուութիւն-
ները Շամախու երկրաշարժից վնասվածների
օգտին: 1) Թիֆլիսի կուսանաց անապատի մայ-
րապետ Փեփրոնիա Ուրեքանցից նրա սեփական
միջոցներով — 50 րուբլի, 2) Ա. Գալանթարից
10 ր., 3) Հ. Առաքելանցից 5 ր., 4) Ա. եւ Կ.
Միկիթարեաններից 3 ր., 5) Յովսէփի եւ Սահակ
Ուշատեաններից 2 ր., 6) Ա. Բաբայանեանից
2 ր., 7) Յ. Մարկոսեանից — 2 ր. եւ 8) տիկին
Նադեժդա Վարդապետեանից մէկ կապոց չորե-
ղէներ: Ընդամենը 74 րուբլի: Ոմագործատանը
նոյն նպատակով ժողովված էր 121 րուբլի, որ
այսօրվայ գումարի հետ անում է 195 րուբլի:
Բացի այդ երկու կապոց չորեղէն:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յունվարի 25-ին
Արտասովոր ձևերով ծանր մտահոգութեան
մէջ է դրել մեր ժողովուրդին Այսպիսի մեղծ
ձևեր ոչ ոք չէ յիշում Երեւանում: Մինչեւ ան-
գամ ձիւնի երես չենք տեսել: Մերկ է ամբողջ
Արարատեան դաշտը, աշնանացանքներ զրկվելով
ձիւնից, հետեւապէս, անհրաժեշտ խոնաւութիւ-
նից, կարող են բոլորովին չաւել, եթէ այսպիսի
չոր եղանակը չարունակվի Ամիսներով չոր հոգի
մէջ ընկած սերունդ եւ եղանակների այս օրինակ
տեսողականութիւնը արդէն որոշ չափով վնաս են
առաջ բերել դաշտային մասերի երկրագործ ժո-
ղովրդի մէջ, այն ժողովուրդի, որի կեանքի եւ
մահիւմ խնդիր կախված է ոռոգումներից եւ
առանձնապէս հեղեղաւաններից: Արարատեան
դաշտը, ամառային ամիսների հրատապ այդ հո-
վաւը, բարեբեր եւ պտղատու մի պարտէի է
ամանվում, չնորհիւ այն լեռնաշղթաների, որոնք
իրանց խորշերում եւ ձորերում ամբարներով փո-
թորիկներից քաղած ձիւնի լեռնամասն չերտելը,
զարման տաքերի հետ դէպի դաշտն են մղում
բազմաթիւ փառներ, հեղեղաւաններ, որոնք ոռո-
գելով ամբողջ դաշտը, յաճախ հեղեղում են
բազմաթիւ ցանքեր եւ նոյն իսկ գլուխը: Այդ
բոլորը զեղեցիկ է եւ ցանկալի, նրանք մաս-
նակ աւերումներն հետ միաժամանակ կանգ
եւ հոգի են տալիս հարկւր հազարաւոր ժողո-
վրդին կերակրող դաշտավայրին: Զր տեղաց ձիւն,
անդադար ձորերը չը լցվեցին ձիւնով, — գաւառ
է դաշտեցու դուրծիւնը, պապակվում, աղանձ-
վում է բարեբեր դաշտը, մահ է փչում ամեն
տեղից:

Անա այսպիսի ծանր մտահոգութիւն զար-
թեցնում է ներկայ ձմեռը իր տարօրինակ չո-
րային եղանակով: Սարերը ծածկված են ձիւնի
աննշան չերտով: Միակ միկիթարական այն է,
որ դաշտերի այսպիսի մերկութեան հետ չա-
րունակվում են տաք եղանակներ, եթէ ոչ բո-
լոր ցանքերը ցրտահար եղած եւ ոչնչացած կը
լինէին այժմ, եթէ գէթ մի շարք վրա տային

Երեւանի նահանգին յատուկ սահմանակից
Եւ իսկապէս Երեւանի կլիման ներկայացնում
մի սոսկալի քանադաշտ, որը տաքերի եւ
տեղի փոփոխականութեամբ, այսպէս թէ
պէս, հասցնում է իր վնասը հարուստ
սակնութեան այս կամ այն ձևով, նահան-
այս կամ այն մասում:

Լեռնային մասերում եղանակների այս դո-
թիւնը առ այժմ այնքան մտահոգութեան առ-
ջէ, որքան էլ ձիւնի առատութիւնը ընդհանր
պէս բարեբար ազդեցութիւն ունենար
վրա: Լեռնային մասերում ժողովուրդը պար-
պում է առանց բացառութեան դարմանաց
քերով, որոնք չեն ջրվում, այլ աճում են
սամբ լեռնային խոնաւ օդի ազդեցութեան
եւ գլխաւորապէս դարմանային առատ ան-
րեւների շնորհիւ: հետեւապէս անձրեւային դո-
րուն ունենալը յամենայն դէպս յուսալի
թէ եւ անձրեւային դարունը քիչ չէ նպատա-
հեղեղաւաններին եւ ոռոգումներին դաշտային
մասերում, սակայն այլ է ձիւնի վերնա-
խնամը, այլ նրա աստիճանական հալումները
պարբերական ոռոգումները, որից այս տարի
նայած մինչեւ այժմ տիրող եղանակներին, զո-
ւ է լինելու: Ուրեմն հասկանալի է դաշտեցի եւ
բազմր ժողովրդի մտահոգութիւնը, եթէ առ-
ջիկայում գտնէ չը տեղաց առատ ձիւն, որը
եւս անպատկերի չէ:

Այսօր մեղանում դարմանային հոտ էր փչո-
ւ երբեմն ընկնում էին անձրեւի կաթիլներ:
Ա.—Դ.

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 6-ին
Յունվարի 29-ին եւ երէկ, ամսի 5-ին, երբ
կոյնան, կոնստանտնուպոլսի կայացաւ Թիֆլիս
քանանների ապահովութեան դաժնաբանի տո-
րեկան ընդհանուր ժողովը: Կանոնադրութեան
8-րդ յօդ. ծանօթութեան զօրութեամբ ընդ-
հանուր ժողովին մասնակցում են ոչ բոլոր քա-
հանները, այլ միաբանական պատգամաւոր
ները: Ժողովին նախագահելու եկել էր, Բ.
հարաւրված էր, չը գիտեմ, կոնստանտնուպոլսի նախ-
անցած Գարեգին վարդապետ Յովսէփեան
մինչեւ զանաւորների կանոնադրութեան 9-րդ
յօդ. պարզ ասում է. «Երբեմն ժողովին չը
խաղած է թեմակալ առաջնորդն, իսկ ի դէ-
պք նախագահելով նորին, ժողովին ընտր
միջոց իւր մէջ գնալաւ օրհնաւ: Բոլոր
հանաներիս համար պարզ էր, որ կոնստան-
տնուպոլսի նախագահ վարդապետը ոչ մի առնչ-
թիւն չունի քանանների ապահովութեան գա-
նաւորների հետ, սակայն ոչ ոք չը պարզեց, կա-
չը վստահացաւ պարզելու, թէ ինչ հանգաման-
ներով կամ որ օրհնելով կոնստանտնուպոլսի
նախագահ վարդապետը առաջնորդ արարանի
իջել էր նախագահելու ժողովին, որը ամենեւե-
լէ նմանակում կոնստանտնուպոլսի Այս երեւոյթի
գուցէ բնականօրէն հետեւում կամ զրկում է
այն պատահականութիւնից, որ այսօր կոնստ-
տնուպոլսի նախագահը բնակվում է առաջնոր-
դարանում, ապահովութեան գանձարանի օր-
նակաւ տեսչի եւ նախագահի բնակարանում...

Բայց թողնենք այս ծանր ինքիբը:
Միաբանական պատգամաւորների ժողովի
ներկայանում են ընտրողական արձանագրու-
թեամբ: Հետեւաբար ուլ այդպիսի վկայական
ներկայանում, չը պէտք է ընտնուով ժողովին:
Սակայն մի քանի քանանայ առանց վկայական
ընտնուցելին, մի քանիսը միայն ժողովը բա-
վելու ժամին էին կողմնակի տեղեկութի-
ստացել, հետեւաբար միաբանական պատգամա-
ւորական ընտրութիւններին չէին մասնակցի:
զրկվել էին ձայնից եւ բողոքներն նախագահին
կէրբողը, որ մասնակցելու կանոնաւոր վկա-
յական ունէր, տեսնելով անկանոնութիւնները
հետապա ժողովից, բայց եւ այնպէս մեր հո-
գեւոր կենսական տիրապետող այն սկզբունք
թէ «եւ իմ օրհնելով, այսինքն» օրհնել է ձեռ
առաջնորդաց «եւ», հարաւորութիւն առեց ժո-
ղովը բաց անել իւր եւ կանոնաւոր Տեղ
ունեցաւ հայտնաւորութիւն եւ ընտրութիւններ
Մի եւ նոյն ժամանակ որոշվեց մի մասնաժո-
ղով ընտրել, որ քննէ նկատուած զեղծումները
եւ բողոքները — ապաքանում այդպիսի երեւոյթի-
ների առաջն առնելու ցանկութեամբ:

Ընտրութիւնները չը վերջացած, տարածա-
լինելով, նիստը փակվեց, որովհետև իրենց չո-
րունակութիւն նիստ գումարել առանց նոյն
հրաւերի փետրվարի 5-ին:
Անա այս նիստը կայացաւ երէկ: Պարզվեց
որ նախագահող հայր սուրբը գործակալ քա-
նայի միջոցով քննել էր զեղծումներն ու բո-
ղոքները, ինչ որ պիտի անէր մի յատուկ մաս-
նաժողով, որը չը չը ձգձգելու ցանկ ու
թէ եւս մի, ինչպէս բացատրեց հայր սուրբը: Այդ
ընտնութիւնը պայցուցի է, որ 1) ժողովին
հրաւիրված չեն եղել Մկրտիչ քան. Գուրաբի-
րեանց, Արսէն աւ. քան. Բազարատունի եւ Սա-
հակ քան. Սահակեան Մոդեւել. եւ 2) առաջին
նիստին ապօրինի մասնակցել է ս. Սարգսի
միաբան Երէկ քան. Ալիագեան: Իր միաբա-
նակից Տեղահոստանդին կամայականութեան
շնորհիւ: Ուրեմն երեք քանանայ կամայականու-
թեամբ ձայնի իրաւունքից զրկվել էին, չորրորդը

նրա տանը, որ սերբական ժողովուրդը հաւատարիմ է նրանց:

ՊՈԼՏԱՎԱ. Կրեմլինում մտադրութիւն կայ տնեւ Գոգոլի յիշատակը:

ԲԱՏՈՒՆ. Ուրոտակված տների փորութեանը ճամբարում չարունակվում են. առ այժմ կենդանի հանված են փրատակների տակից 32 հոգի. Սաստիկ վնասված են 34 գիւղեր: Աստրախանկա գիւղի մօտ բացվել է հրաբուխ: Բագուի կոմիտէի աշխարհային օգնության խումբը եւ սպիտակեղջիկ նոր բեռներ, ճամբարների կարիքը մեծ է:

ՕՐԵՍՏԱ. Մասնաւոր անձերի նախաձեռնութեամբ միջնորդութիւն է յարուցված, որով թոյլտուութիւն է ինքզինում հիմնելու Օդեսայում մի ուսումնարան, որտեղ նախապատրաստվելին գործնական նկարչութեան բոլոր ճիւղերի վարպետներ:

ՕՍՄԱ. Ժողովրդական ընթերցանութիւնների մասնաժողովը որոշեց տնեւ Գոգոլի յիշատակը դասախոսութեամբ եւ աշակերտներին Գոգոլի պատկերը բաժանելով:

ԿԱՉՍԱ. Դուռնի որոշեց, ի յիշատակ ժողովուրդի եւ Գոգոլի մահվան յիշատակի, բաժնաւորական երկու ուսումնարան նրանց անունով, քաղաքի երկու փողոցները անունել Գոգոլի եւ ժողովուրդի անուններով եւ տնեւ մասնակից զարմեւ քաղաքի մահվան զարմեւ քաղաքականութեամբ հրատարակելով «Վերադարձ» թատերական լեզուով:

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ. Տնտեսական գաղթականութեան մօտ փոթորիկը դուրս է գցել ծովից հինգ կէտերի:

ՄՕՍԿՎԱ. Ինկուբների մանկութեան դրամատէրերից մէկը, որ եկել է Մոսկվա, բացատրեց, թէ մրցութիւն կազմակերպելու համար անպիտան եւ երկարատեւ արարածների ներմուծումն զէպի, նա տնեւից է Մոսկվայի խոշոր գործարարներին եւ առեւտրական տների ներկայացուցիչներին հետ, հանդիպել է ընդհանուր ուշադրութեան դէպի իր ձեռնարկութեանը ստացել է ապրանքների նմուշներ եւ հաւաքել է բոլոր կարեւոր տեղեկութիւնները Մոսկւանմայի հետ Ինկուբից եկել է, Կվանտոնեան չլրանի կառավարչի կարգադրութեամբ, մաքսային պաշտօնային Սորոկին Մոսկւան հաղորդեց, թէ յունիսին Ռուսաստան կը գան մի քանի չինական վաճառականներ մեծ քանակութեամբ ապրանքներ գնելու համար:

ՍՄԱԳԵՐ՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ՌԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՍԶԱԿ ԻԼԻԻԲ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԳՐԱԿԱՆԱՆՆԵՐ ԵՐԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագումը Թիֆլիսի հաշուով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բագու. շաբաթը մէկ անգամ հինգշաբթի օրերը դուրս է գալիս ցերեկվայ 2 ժամ 32 րոպ. (3 ժ. 30 ր.), հասնում է Բագու գիւղերվայ 3 ժամ 58 ր. (4 ժ. 56 րոպէին):

Արագ գնացք Բագուից—Թիֆլիս դուրս է գալիս չորեքշաբթի օրերը երեկոյան 10 ժ. 41 ր. (11 ժ. 39 ր.) հասնում է Թիֆլիս ցերեկվայ 12 ժ. 47 ր. (1 ժ. 45 ր.):

Պատասար գնացք Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 12 ժ. 2 ր. (1 ժամին), հասնում է Թիֆլիս ցերեկոյան 6 ժ. 24 ր. (7 ժ. 22 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյան 7 ժ. 54 ր. (8 ժ. 52 ր.), հասնում է Բագու մատուռեան 8 ժ. 33 ր. (9 ժամ 31 րոպէին):

Մարդատար գնացք Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 3 ժ. 35 ր. (4 ժ. 33 ր.), հասնում է Թիֆլիս մատուռեան 8 ժ. 50 ր. (9 ժ. 48 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից մատուռեան 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.), հասնում է Բագու երեկոյան 9 ժ. 28 ր. (11 ժ. 26 ր.):

Պատասար գնացք Բագուից դուրս է գալիս երեկոյան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է Թիֆլիս մատուռեան 10 ժ. 45 ր. (11 ժ. 43 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 11 ժ. 47 ր. (12 ժ. 45 ր.), հասնում է Բագու մատուռեան 6 ժ. 33 ր. (7 ժ. 31 ր.):

Մարդատար գնացք Բագուից դուրս է գալիս մատուռեան 8 ժ. 58 ր. (9 ժ. 56 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյան 8 ժ. 33 ր. (9 ժ. 31 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյան 9 ժ. 36 ր. (10 ժ. 34 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 2 ժ. 12 ր. (3 ժ. 10 ր.):

Պատասար գնացք դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Կարս երեկոյան 10 ժ. (10 ժ. 58 ր.), հասնում է Կարս ցերեկվայ 8 ժ. 37 ր. (9 ժ. 35 ր.), Կարս ցերեկվայ 12 ժ. 23 ր. (1 ժ. 12 ր.):

Պատասար գնացք Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.), հասնում է Ալէքսանդրոպոլ 7 ժ. 40 ր. (8 ժ. 38 ր.), Կարս ցերեկվայ 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), Թիֆլիս մատուռեան 6 ժ. 47 ր. (7 ժ. 45 ր.):

Խառն գնացք Թիֆլիսից դուրս է գալիս ցերեկվայ 12 ժ. 30 ր. (1 ժ. 28 ր.), հասնում է Սանահին ցերեկվայ 5 ժ. 12 ր. (6 ժ. 10 ր.) և Կարս ցերեկվայ 7 ժ. 19 ր. (8 ժ. 17 ր.):

Խառն գնացք Կարսից Թիֆլիս դուրս է գալիս մատուռեան 11 ժ. 45 ր. (12 ժ. 43 ր.), հասնում է Սանահին ցերեկվայ 1 ժ. 30 ր. (2 ժ. 28 ր.) և Թիֆլիս երեկոյան 6 ժ. 8 ր. (7 ժ. 6 րոպէին):

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԲՈՐ ՀԻՄՆԻՒՄՆՈՑ

Բ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանգէպ)

Ա մ ե ո ռ, բ ա զ ի կ ի ր ա կ ի օ ռ ե ի զ:

Ա Ռ Ա Ռ Ս Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նաւատարգեան—11—12 ժ. փրատուութեան, փնտրական (սիֆիլիս) և միգրատ. հիւանդ.

Կ. Մ. Չիկովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեւրոպիկ հ.

Կ. Լ. Գեղիկով—12—1 ժ. ախանջի, քթի և կուրիկ հ.

Զ. Բ. Բարանտեանց—11—12 ժ. կանանց և երեխայից հիւանդ.

Կ. Պ. Կարապետեանց—1—12 ժ. ներքին և երեխայից հ.

Ե Ր Ե Յ Ո Ն Ե Ր Ը

Կ. Ն. Ռոստամբեկով—5—6 ժ. փրատուութեան և մորթի հ.

Ա. Ն. Եղապետեանց—6—7 ժ. նեւրոպիկ (երկարատեւ), փնտր. և մորթի հ.

Կ. Ա. Թաթարեանց—7—7½ ժ. ներքին և երեխայից հ.

Բ. Ա. Նաւատարգեան—7½—8 ժ. Վարդ 50 կ. չքաղաքները ձրի համարները (կոնսիլիում) և օպերացիայի համար տանձին:

Օ. Տ. Առաքինիական—տանը, ծաղկահատ և բըժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ

Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ԲՈՒԺԱՍՆԵՆԵԱԿ

ԴՕԿՏՈՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ

Նորագոյն ապարաններով եւ էլեկտրական մեքենաներով. մասնաւորապէս

ԲՅԻ, ԲԹԻ, ԱԿՆԶԻ ԵՒ ԿՐԾԻ ՀԻՄՆԱԴՈՒԹԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Сергиевская ул., д. 12.

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ հոգաբարձական խորհրդում սոյն փետրվարի 13-ին

իրենկոյան ժամի 8-ին, լինելու է կրկնակի անձուր կապովով տալու 4 տարի ժամանակով. 13-ից փետրվարի 1902 թ.ի Սաղուռը քաղաքի 8-րդ մասում եղած հանգուցեալ Օբոյեանցի նուիրած կալուածքը: Պայմանները կարելի է կարգալ հոգաբարձութեան գիւմաստանը առնել օր, բացի տնեւից, ցերեկվայ ժամի 10—1-ը:

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

1—1

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Չեղքի խաղաղքներ

Ռուսերէն, հայերէն կուրիներ երեխաների համար՝ սովորելու տաներ եւ բառեր. ուսուցիչը բաղկացած է 144 տաներից, հայերէնը—168 տաներից, առանձին-առանձին արկղներում, երկուսը միասին 2 ր., առանձին 1 ր. 25 կ. ճանապարհածախով: Հատով գնողներից վճարը ստացվում է կանխիկ. տանից աւել գնողները կուրաղկեն վճարի 1/3 մասը եւ բուլբուռն 25 զիլլուտ:

Тифлисть Елизаветинская, 20. Т. Ованесянцъ.

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

ԹԻՖԼԻՍԻ ԺԱՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, փետրվարի 9-ին,

Նշանակված է

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԻՍ

Սկիզբը երեկոյան 9 ժամին

Պարտաւորական է դիմակով լինել մինչև վերջը: Հագուստի ձեւը՝ գինուորականն, պէտք է լինեն իրանց սովորական համազգեւորով, քաղաքացիները—սիրտով, եւ պայման չորերով:

Տոմարները գտնվում են շէյքարի մօտ:

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2

2—2